«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածում՝

- 3-րդ մասում «գրավոր քննության օրը» բառերը փոխարինել «գրավոր և բանավոր քննության օրերը» բառերով.
- 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Հայտատուները հանձնում են գրավոր քննություն, որից դրական գնահատական ստանալուց հետո նաև բանավոր քննություն: Գրավոր կամ բանավոր քննություններից դրական գնահատական ստացած անձինք ընդգրկվում են քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում՝ որակավորման հանձնաժողովի որոշմամբ:

Գրավոր և բանավոր քննությունների անցկացման կարգը սահմանում է քննչական կոմիտեի նախագահը:».

- 10-րդ մասում «ուսումնառությունից» բառը փոխարինել «գրավոր քննությունից» բառերով.
- 11-րդ մասում «Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 10-րդ մասում նշված» բառերով:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից ազատված» բառերը փոխարինել «սույն օրենքի 18-րդ հոդվածի 10-րդ մասում նշված»

բառերով:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

- 6-րդ մասից հանել «ավարտելով ուսումնառությունը արդարադատության ակադեմիայում,» բառերը, իսկ «արդարադատության ակադեմիայում ուսումնառությունից» բառերը փոխարինել «գրավոր քննությունից» բառերով.
- լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ մասով.

«7.1. Որակավորման քննություններից դրական գնահատական ստացած և քննչական կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, ովքեր չունեն առնվազն մեկ տարվա դատախազի, դատավորի, քննիչի, հետաքննության մարմնի պետի կամ աշխատակցի պաշտոնում աշխատանքի ստաժ, ապա քննչական կոմիտեում նշանակվելուց հետո առաջին 6 ամսվա ընթացքում քրեական գործի նախաքննությունը կատարում են քննչական խմբում՝ ներգրավվելով որպես քննչական խմբի քննիչ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ **Ա. Սարգսյան**

2018 թ. _____

Երևան

ՀՕ- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի մայիսի 2-ի ՀՕ-50-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

- 1-ին մասի 1-ին կետից հանել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և» և «(այսուհետ՝ քննիչներ),» բառերը.
- 1-ին մասի 2-րդ կետում «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով.

- 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն օրենքով նախատեսված քննիչների, քննչական կոմիտեի դեպարտամենտի քաղաքացիական ծառայողների ուսուցումը Ակադեմիայում իրականացվում է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին և սույն օրենքին համապատասխան:».

- 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն օրենքով նախատեսված քննիչների, քննչական կոմիտեի դեպարտամենտի քաղաքացիական ծառայողների ուսուցումն Ակադեմիայում ֆինանսավորում են համապատասխանաբար քննչական կոմիտեն և հատուկ քննչական ծառայությունը:»:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերից հանել «քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց,» բառերը, իսկ «կոմիտեի դեպարտամենտի պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետից հանել «քննիչների թեկնածությունների կամ» բառերը:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածում՝

- 1-ին մասի **3-**րդ կետում «կոմիտեի դեպարտամենտի պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով.
- 1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
- 2-րդ մասի «1-ին, 2-րդ և 4-րդ» բառերը փոխարինել «1-ին և 2-րդ» բառերով:

Հոդված 6. Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածում՝

- 1.-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.
- 2-րդ մասի 4-րդ կետից հանել «քննիչների կամ» և «, քննչական կոմիտեի նախագահին» բառերը:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածում՝

- 2-րդ և 2.1-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասից հանել «, իսկ քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասով՝ քննչական կոմիտեի կարգապահական հանձնաժողովը» և «, քննիչների» բառերը.

3) 4-րդ մասից հանել «, քննիչների» բառերը:

Հոդված 9. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «, քննիչների» բառերը:

Հոդված 10. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 1-ին կետից հանել «քննիչների և» բառերը.

2) 7.1-րդ և 7.2-րդ մասերում «և 4-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով.

3) 8-րդ մասում «կոմիտեի դեպարտամենտի պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 11. Օրենքի 20-րդ հոդվածում՝

- 2-րդ մասում «կոմիտեի դեպարտամենտի պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով.
- 3-րդ մասից հանել «քննիչների,» և «քննչական կոմիտեն,» բառերը.
- 7-րդ մասից հանել «կոմիտեի դեպարտամենտի պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 12. Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասից հանել «քննիչների կամ», «քննիչների թեկնածուների կամ» բառերը:

Հոդված 13. Օրենքի 22-րդ հոդվածի **2.**1-րդ մասից հանել «Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման,» բառերը, իսկ «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 14. Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասից հանել «քննիչների և» բառը:

Հոդված 15. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «քննչական կոմիտեի նախագահը և» և «քննչական ծառայության ստորաբաժանումների,» բառերը.

2) 2-րդ և 3-րդ մասերից հանել «, քննչական կոմիտեի նախագահին» բառերը:

Հոդված 16. Օրենքի 26-րդ հոդվածում՝

- 1-րդ և 7.1-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.
- 3-րդ մասից հանել «, քննիչների»բառերը.
- 1-րդ և 9.1-րդ մասերում «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով.
- 12-րդ մասից հանել «2.1-ին», «և 7.1-ին» բառերը:

Հոդված 17. Օրենքի 27-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասից հանել «քննիչ,» և «, քննչական կոմիտեի նախագահի» բառերը.

2) 4-րդ մասից հանել «, քննիչների» և «, քննիչ» բառերը, իսկ «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով.

3) 17-րդ մասից հանել «քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց» բառերը, իսկ «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 18. Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերից հանել «, քննիչների» բառը.

2) 3-րդ մասի «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 19. Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասում «կոմիտեի դեպարտամենտում պետական» բառերը փոխարինել «կոմիտեում քաղաքացիական» բառերով:

Հոդված 20. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ **Ա. Սարգսյան**

2018 թ. _____

Երևան

ՀՕ- -Ն